ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ.,պրոֆեսոր
ՏԻԳՐԱՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնները բազմաթիվ են և բազմաբնույթ: Դրանց մի մասը կախված է կոնկրետ գյուղացիական տնտեսության, գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեությունից, մի մասը՝ արտադրությունում կիրառվող տեխնոլոգիաներից, արտադրության կազմակերպական ձևից, արտադրական ռեսուրսների օգտագործումից, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրումից և այլն:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը հանդիսանում է արտադրանքի իրացումից ստացվող շահույթի գումարը: Վերջինիս չափը կախված է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող հասույթից և արտադրանքի արտադրության և իրացման վրա կատարվող ծախսերի մեծությունից: Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությունում տնտեսավարողների շահույթի վրա շոշափելի ազդեցություն է ունենում արտադրանքների իրացման գինը, ինչպես նաև ապրանքային արտադրանքի ծավալը: Իրեն հերթին կոնկրետ արտադրանքի գինը ձևավորվում է պահանջարկի և առաջարկի ազդեցության տակ և մեծապես կախված է արտադրանքի իրացման մեխանիզմներից: Վերջինիս անկատարությունը, հատկապես, բացասաբար է անդրադառնում գյուղատանտեսական արտադրության արդյունավետության վրա:

Արտադրանքի իրացումից ստացվող հասույթի մեծացման վրա ազդող կարևորագույն գործոններից է, արտադրանքի որակի բարձրացումը: Որակի նկատմամբ պահանջները հատկապես բարձր է հացահատիկի, պտղի տարբեր տեսակների, խաղողի, լուլիկի, կաթի և այլ արտադրատեսակների համար:

Շահույթի մեծության վրա ազդող գործոնները սերտ կապված են միմյանց հետ և նրանցից մեկի փոփոխությունը հանգեցնում է մյուսների համապատասխան փոփոխության: Այսպես, իրացված արտադրանքի ամբողջ ծավալը ազդեցություն է գործում շահույթի գումարի և դրամական հասույթի վրա: Դրա հետ միաժամանակ դրամական հասույթի մեծությունը կախված է համախառն արտադրանքի քանակից և ապրանքայնության մակարդակից:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ են կոնկրետ ցուցանիշներ, որոնք կարտացոլեն արտադրական գործընթացի վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Միայն ցուցանիշների համակարգը կարող է հնարավորություն տալ իրականացնելու համալիր վերլուծություն և կատարել հավաստի հետևություն գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության գնահատման դեպքում պետք է հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները, որոնք ազդեցություն են գործում վերջնական արդյունքների վրա:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետությունը բնութագրվում է բնեղեն (բնական) և արժեքային ցուցանիշների համակարգով: Ելակետայինը հանդիսանում են բնական ցուցանիշները՝ բերքատվություն, գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Սակայն բնեղեն ցուցանիշները արտացոլում են արդյունավետության միայն մի կողմը: Տնտեսական արդյունավետության բացահայտման համար անհրաժեշտ է ունենալ աշխատանքային ամբողջական ծախսերը, որը ապահովել է տվյալ բերքատվության կամ կենդանու մթերատվության մակարդակը: Միևնույն մակարդակի բերքատվության կարելի է հասնել աշխատանքային և նյութական ծախսումների տարբեր մակարդակների դեպքում: Միևնույն բերքատվության դեպքում կարող է ստացվել արտադրանքի տարբեր որակ, որն իր ազդեցությունն է ունենում արտադրության արդյունավետության վրա:

Որպեսզի ստանանք արտադրության ծախսերի և արդյունքների չափակցելի մեծություններ արտադրված արտադրանքի ծավալը փոխակերպվում է արժեքային ձևին:

«Արժեքային ցուցանիշներն ունեն ոչ միայն հաշվային, այլ տնտեսական նշանակություն, այսպիսով նրանք մասնակցում են ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացմանը, իսկ արտադրության արդասիքը հանդես է գալիս որպես ապրանքը շուկայում: Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության հիմնական արժեքային ցուցանիշներն են համախառն եկամուտը, զուտ եկամուտը և շահույթը»[1]:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների բնույթի վերլուծությունը հնարավորություն է տվել կանխորոշել արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները:

---

[1] Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства.-М.: Ассоциация авторов и издателей. ЭКМОС, 1998.-с. 351.

Ընդհանուր բնորոշմամբ գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներն են համախառն արտադրանքի ավելացումը, նրա արտադրության համար պահանջվող ծախսերի կրճատումը և արտադրանքի իրացման ուղիների կատարելագործումը: Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունվետության բարձրացման հիմնական ուղղություններն առավել պատկերավոր ներկայացնելու համար այն տրվել է սխեմատիկ ձևով (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները

Վերջնական արդյունքում արտադրության արդյունավետության վրա էականորեն ազդում է արտադրանքի արտադրության և իրացման նյութադրամական ծախսումների մակարդակը: Արտադրական ծախսումների կրճատումը մեծապես պայմանավորված է հողային, աշխատանքային և նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ:

Արտադրանքի արտադրության ծավալների ավելացմանը, արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի կրճատմանը կարելի է հասնել ենթակառուցվածքների բարելավման, հետբերքահավաքային նոր տեխնոլոգիաների կիրառման, արտադրության բոլոր միջոցների խնայողաբար օգտագործման միջոցով:

Գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության բարձրացման գործում կարևոր տեղ ունի արտադրանքի իրացման արդյունավետ ուղիների և մեխանիզմների կիրառումը:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է հանրապետության գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները վերը նշված՝ արտադրության ծավալների ավելացման, նյութա դրամական ծախսերի կրճատման, արտադրանքի իրացման արդյունավետ մեխանիզմների կիրառման շրջանակներում:

Հանրապետության բուսաբուծության ճյուղի տնտեսական արդյունավետության բարձրացումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատում,
- ցանքատարածությունների կառուցվածքի բարելավում և միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացում,
- բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ներդրումը, վերջիններիս մշակության ագրոտեխնիկայի յուրացում,
- 490 հազ. հա վարելահողերի լիարժեք օգտագործում, դրանից առնվազն 450.0 հազ. հա ինտենսիվ մշակություն և 280 հազ. հա ոռոգման ապահովում,
- բազմամյա տնկարկների տարածության ավելացում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուսաբուծության ճյուղում նշված խնդիրների լուծման հնարավոր ուղիներն են՝

- Հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը: Այդ նպատակով՝ նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացում, վերջինիս ուղղությամբ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսավարողներին խորհրդատվական ու տեղեկատվական աջակցություն:
- Բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ընդլայնման նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքի բարելավման՝ ցածր ինտենսիվության մշակաբույսերը առավել արժեքավոր տեսակներով փոխարինման, հանրապետության պայմաններին համապատասխանող հատիկաընդեղեն մշակաբույսերի (հնդկացորեն, ոլոռ, հաճար և այլն) մշակության տեխնոլոգիաների յուրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, պարարտացման, պաշտպանության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացում:
- Առաջնային սերմնաբուծության զարգացում մասնավոր տնտեսություններին պետական աջակցության ու խորհրդատվության ապահովման միջոցով: Սերմերի արտադրության, օգտագործման բնագավառում օրենսդրության պահանջների լիարժեք կատարում: Սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովում, երկրորդային սերմնաբուծության ոլորտում մասնավոր ձեռներեցության խթանում: Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել գարնանացան հացաբույսերի (գարնանացան ցորեն, գարնանացան գարի, վիկ և վարսակ), ինչպես նաև բազմամյա կերային մշակաբույսերի սերմնաբուծությանը:
- Խաղողի սելեկցիայի աշխատանքների նպատակաուղղում ցրտադիմացկուն, բարձրորակ, փոխադրաունակ, սեղանի, ունիվերսալ և տեխնիկական նոր սորտերի ստեղծմանն ու ներդրմանը: Առանձնակի ուշադրություն դարձնել վիրուսազերծ տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը:
- ՀՀ պետբյուջեից և այլ աղբյուրներից կատարվող հատկացումների օգտագործման արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով ավելացնել բույսերի առավել վտանգավոր և զանգվածային վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ծավալները: Բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի գործընթացների իրավական կարգավորում և տեսչական հսկողության ուժեղացում:
- Բույսերի պաշտպանության ինտեգրացված պայքարի ներդրում, կենսաբանական և էկոլոգիապես անվտանգ միջոցների կիրառության ընդլայնում: Տարբեր կազմակերպչական ձևերով գործող բույսերի պաշտպանության ծառայությունների ձևավորման խթանում, դրանց կայացմանը մասնագիտական և խորհրդատվական աջակցություն: Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման պետական ծրագրի իրականացման միջոցով գյուղատնտեսությունում պարարտացման արդյունավետ սխեմաների կիրառում:

Անասնապահության ճյուղի տնտեսական արդյունավետության բարձրացումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, արոտների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով անասնակերերի սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործում,
- խորհրդատվության ապահովման և նպատակային վարկավորման միջոցով՝ անասնապահական առևտրային կազմակերպությունների ձևավորման խթանում,
- անասունների կերակրման և պահվածքի բարելավման, տոհմային գործի զարգացման և անասնաբուժասանիտարական աշխատանքների կազմակերպման մեխանիզմների կատարելագործման միջոցով մթերատվության բարձրացում,
- թեթև արդյունաբերության ավանդական ճյուղերի (գորգագործություն, մահուդագործություն, կոշիկի և հագուստի արտադրություն) զարգացում և դրա հիման վրա բրդի և կաշվի պահանջարկի ավելացում,
- ալպիական արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման միջոցով՝ շվեյցարական պանիրների արտադրության և արտահանման ծավալների ավելացում,
- անասնագլխաքանակի հաշվառման բարելավման և համարակալման ու տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի ու անասնաբուժական համակարգի բարելավում, ինչպես նաև պետական ուղղակի աջակցության ծրագրերի իրականացում:

Ըստ ուսումնասիրությունների անասնապահության ճյուղում նշված խնդիրների լուծման, մասնավորապես՝ ճյուղում տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիներն են՝

- Տոհմային գործի զարգացման երկարաժամկետ նպատակային ծրագրի մշակում և իրականացում:
- Հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանություն և սելեկցիոն նպատակներով օգտագործում, արհեստական սերմնավորման ենթարկվող անասնագլխաքանակի ավելացում և արդյունքում սերնդատվության ցուցանիշի և մատղաշի տոհմային հատկանիշների բարելավում:
- Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համար նախադրյալների ստեղծում և համապատասխան ծրագրի իրականացում:
- Գյուղատնտեսական կենդանիների գենոֆոնդի պահպանման և կատարելագործման, ինչպես նաև նոր ցեղերի ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացման համար գիտահետազոտական համակարգի ու տոհմային անասնաբուծությամբ զբաղվող տնտեսություններին բազմակողմանի աջակցություն:
- Ըստ գոտիական առանձնահատկությունների անասնապահական տնտեսությունների օպտիմալ չափերի սահմանում և խորհրդատվական ու նպատակային վարկավորման միջոցով այդպիսի տնտեսությունների ձևավորման աջակցություն:
- Դաշտային կերարտադրության զարգացման և դրա կառուցվածքի բարելավման հաշվին սեփական արտադրության կերերով ապահովվածության մակարդակի բարձրացում, արոտավայրերի երկարա-

ժամկետ վարձակալության և մասնավորեցման խրախուսում, հեռագնա արտոնների արդյունավետ օգտագործմանը նպաստող մեխանիզմների ներդրում, արոտավայրերի վարձակալների և սեփականատերերի կողմից արոտների բարելավմանն ուղղված միջոցառումներին տեխնիկական աջակցության և խորհրդատվության ապահովում, բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման միջոցով դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավում, հատիկային և համակցված կերերի, ինչպես նաև սպիտակուցային և վիտամինային հավելումների արտադրության համար փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն, լեռնային արոտավայրերի դեգրադացման աստիճանի գնահատում և դրանց բարելավման միջոցառումների մշակում:

- Կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանություն և հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծում, հիվանդությունների կանխարգելման ծրագրերի իրականացման շնորհիվ ապահովել առավել վտանգավոր հիվանդություններով վարակված կենդանիների գլխաքանակի նվազեցում:
- Գյուղական համայնքներում անասնաբույժների ինստիտուտի ամրապնդում՝ դրանց նյութատեխնիկական բազայի համալրման, ՀՀ պետական բյուջեից հատկացումների ավելացման և վճարովի անասնաբուժական ծառայությունների ընդլայնման միջոցով:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման կարևորագույն խնդիրներից է գոտիական մասնագիտացումը և արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը:

Ազատական տնտեսության պայմաններում այս գործընթացները հիմնականում կարգավորվում են շուկայական գործոններով, սակայն, նկատի ունենալով հիմնախնդրի ռազմավարական նշանակությունը, անհրաժեշտ է, որ պետությունը տարածքային զարգացման քաղաքականությունը նպատակաուղղի արտադրության մասնագիտացմանը և ռացիոնալ տեղաբաշխմանը:

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ.,պրոֆեսոր
ԱՆՆԱ ՄԱՔՍՈՒԴՅԱՆ
ԵՊՀ դասախոս

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտությունը բաղկացած է հետևյալ փուլերից.

1. **Նախապատրաստական փուլ**

Հետազոտության ծրագրի կազմում.

- Հետազոտության օբյեկտի, առարկայի ընտրություն.

Օբյեկտ՝ կազմակերպության աշխատակիցներ.
Առարկա՝ արտադրական և սեփականատիրական հարաբերությունները, կազմակերպության կառավարման առանձնահատկությունները:

- Հետազոտության նպատակների նկարագրում.

Հետազոտության հիմնական նպատակն է պարզել արտադրական և սեփականատիրական հարաբերությունների և կառավարման առանձնահատկությունները Հայաստանում գործող կազմակերպություններում:

- Տեղեկատվության հավաքման մեթոդի ընտրություն.

Տեղեկատվության հավաքման մեթոդն է հարցաթերթիկով իրականացվող հարցումը:

1. Հետազոտության գործիքի (հարցաթերթիկի) ստեղծում.
2. Ընտրանքի կազմում:

Կազմվեց բազմաստիճան պատահական ընտրանք, որը ներկայացրեց Հայաստանում գործող կազմակերպությունների աշխատակիցներին: Ստրատիֆիկացիան կատարվեց հետևյալ 2 չափանիշներով՝ «մեծ և փոքր կազմակերպություններ», «պետական և մասնավոր կազմակերպություններ»: Ընտրանքի առաջին բայլի ժամանակ որոշվեց ներառել 30 մեծ և 70 փոքր կազմակերպություններ, որոնցից 3/4-ը պետական էին: Երկրորդ բայլն էր կազմակերպության ներսում ընտրել ռեսպոնդենտներին: Ընտրությունը կատարվեց աշխատակցի կազմակերպությունում զբաղեցրած դիրքի հիման վրա, և առանձնացվեց 2 կատեգորիա՝ ղեկավար և որոշում չընդունող աշխատակից:

Ընտրությունը կատարվեց պատահական հավանական ընտրանքի սկզբունքներով:
Հետազոտության ընթացքում հարցվել է 350 ռեսպոնդենտ:
Ընտրանքի սահմանային սխալը 0,99 վստահելի հավանականությամբ չի գերազանցի 2.2% (բացառությամբ խաչաձև աղյուսակների).

2. **Պիլոտային հետազոտության անցկացման և փոփոխությունների ներմուծման փուլ,**
3. **Դաշտային փուլ՝ տեղեկատվության հավաքում,**
4. **Հավաքված տեղեկատվության մշակման համար նախապատրաստման փուլ,**